

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԾ ԼՈՒՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՈԳԻՆ ԶԱԼԱԾ Է ՄԵՉՄԷ ՇԱՏԵՐՈՒ ՄՕՏ

Ծաբաթավերջին հրապարակված էի սփիտքահայ ու լիբանանահայ գաղութի մեջ քաջածանօթ, պատկառելի հեղինակություն վայելող կազմակերպությունն մը խարոկահամարձակ: Պահը խրախուսիչ էր յուզիչ էր միաժամանակ: Ուշ ժամուն, խարոկահամարձակ ասարտէն ետք, երբ մեր բարեմտադրութիւնները փոխանցեցինք կազմակերպիչներուն, վերադարձի ճամբուն վրայ ունեցայ այս մտորումները, որոնք անմիջապէս յանձնեցի թուղթին: Զգացի թէ լիբանանահայութիւնը ժպիտով ու ամենայն անտարբերութեամբ, ե՛ր միասնակամօրէն, կ'ուղղուի դէպի անդունդ: Այո՛, կ'երթանք անդունդ, սակայն քիչեր կը ցնցուին եւ դժգոհութիւն կ'արտայայտեն տիրող ողբերգական վիճակէն: Կ'ուղղուինք դէպի անդունդ, առանց գիտակցելու, թէ կը գտնուինք անհետացման ու փոշիացման ճանապարհի եզրին:

Այս է լիբանանահայութեան իրավիճակը: Մեր ասորած դառն իրականութիւնը: Անդունդի եզրին՝ զգաստութեան փոխան կարծէք խրախճանքի սեմին կը գտնուինք:

Արտագաղթը կ'ալեկոծէ լիբանանահայութեան գոյատեւման պայքարով տագնապող հոգիները, որովհետեւ արտագաղթի իւրաքանչիւր դէպք մնան է մտի հիւծող կաթիլի, որ կը հալի անկէ տկարամալու եւ վերջապահութեան շիջելու համար: Արտագաղթը կը հնձէ սեզ, սփռելով ամէնուրեք, առաջնորդելով դէպի օտարութիւն եւ ուժացում: Ազգային Առաջնորդարան երթալու պէտքը չկայ տեսնելու համար թէ ինչպիսի թղթածրարներ կը վխտան պոռտել, ինչպիսի՝ ընտանիքներ քանդող, բոյներ քայքայող, անտէր որբուկներ ձգող դասեր ու սարքանքներ շարուած են իւրաքանչիւր ընտանիքի գլխին: Ամբարկու ազգ բառուցելու ենթահողը կը կայանայ ընտանիքի անտէր բոյներու բազմացումին մէջ, որ ինքնին կ'ապահովէ սերնդափոխութեան որսամբարանկան շարունակականութիւնը: Ո՛վ է ինչպէ՛ս պիտի զսպէ ազգային այս փլուզումին ընթացքը: Ինչպիսի՞ սերունդ կ'ակնկալուենք մեր անոր սերունդէն, երբ անոնց ծնողները մեծագումար ծախսեր յանձն կ'ստանան իրենց զաւակները առաջնորդելու օտար վարժարան, սիրով ու հաճոյքով օտարացնելու մատուցելու սերունդը, որ մէկ քանի տարի ետք անմիջապէս պիտի մոռնայ Վարդանանցի ու Ապրիլ 24-ի յիշատակները:

Ախտս որ վաղամտիկ գրագէտ Վազգէն Շուշանեան հնարաւորութիւն չունի տեսնելու մերօրեայ լիբանանահայ գաղութը: Ֆրանսա ասորած Վազգէն Շուշանեանը հատոր մը ամբողջ խորագրած է "Մարդ մը որ Արարատ չունի իր հոգւոյն խորը", թիրախ ունենալով Շահան Շահնուրը: Վազգէն Շուշանեան եթէ այսօր Անդենակալանէ հետեւէր մեր ազգային առօրեային վստահաբար լոյս պիտի ընծայէր "Արարատը դատարկուած սերունդներ" խորագիրով հատորներու շարք մը, որովհետեւ Արարատի խորհուրդէն դատարկուող հայերը կը բազմանան հեռագետէ, ազգային ցանքով տառապող մարդկանց փաղանգը կը անհանգի: Ծա՛ւր են արդեօք մեր խօսքերը, երբ ազգային-հայրենական, դարաբաղեան հակամարտութեան մասին կենաց տագնապներու ճակատագրական այս օրերուն, ձուլման ու այլատեւման ախտը իր ճիրաններուն մէջ կ'ստնէ հալու ոգին եւ առանց որեւէ դժուարութեան իսկ կը ճմարենք մարդիկ, գանգուածներ, որոնք չունին ազգային գիտակցութեան ըմբռնում իրենց հոգւոյն մէջ:

Համաշխարհային պարտադրանքներու եւ պայմաններու տակ մեր ազգային կեանքէն ներս տեսնուած է իւրովի իրավիճակ: Ազգային ինքնորոշումութիւն եւ ազգային յատկանիշներ դատապարտուած են ձուլուելու եւ փոշիանալու համաշխարհայինացումի խառնարանին մէջ: Հետեւաբար, Արարատի ոգին սկսած է շատերու ոչինչ ըսել: Միջնորդ առանց Արարատի ոգին մեր ազգային ինքնորոշումութիւնն ու գիտակցութիւնը կ'ապրին անկում: Արարատի ոգին այն ոգին է որ իւրաքանչիւր կը պարտադրեցնէ կառչի ազգային սրբութեանց, մեզմէ իւրաքանչիւրին կը պարտադրէ պահպանել մեր ազգային դիմագիծը:

Սակայն ինչպիսի՞ հեգնանք, երբ ականատեսն ենք մարդոց որոնք ոչ միայն Արարատ չունին իրենց հոգւոյն խորը, այլ Արարատի մէկ մասնիկն անգամ գոյութիւն չունի անոնց մօտ:

88 տարի առաջ, այս օրերուն, Փարիզի արուարձաններէն մէկուն մէջ տեղի կ'ունենային հայ դիւանագիտական պատմութեան մէջ իւրապատու տեղ գրատող Սեբի Դաշնագիրի բանակցութիւնները: Ընդհանուր առմամբ դաշնագրին Դաշնակիցները մեզի կը խոստանային բաւական ընդարձակ Հայաստան մը՝ Մ. Նահանգներու նախագահ Վուտրօ Ուիլսոնի վստահութեամբ սահմաններու գծումով: Սակայն եթէ մարդիկ մէկ կողմէ գծագրեցին քարտէսներ, միւս կողմէ անոր ետեւի տուին պարտութեան փլատակներէն դուրս եկող Բեւաւական Թուրքիոյ...: Այսօր, երբ հայ ժողովուրդը տէր է անկախ պետականութեան, պահանջեալ հարկին ան ի վիճակի է պարտադրելու իր հեղինակութիւնը եւ միջազգային դիւանագիտութեան ուշադրութեան յանձնելու Սեբի Դաշնագիրի վերանայման կամ վերաքննարկման հրամայականը:

Մինչ Սեբի Դաշնագիրի վերանայումը պահանջելով կը պահանջուի հող եւ բնօրրան, միւս կողմէ Երեւանի մօտ օտար դեսպանատուններուն առջեւ հալեր շարքեր կազմած կը գաղթեն Հայաստանէն, կամ՝ Սփիւռքի մէջ կը խօսուի Սեբի ու արդար իրաւունքներու հատուցման մասին, մինչ գետնի վրայ մատի վրայ կը հաշուեն անոնք, որոնք պատրաստ են կայք հաստատելու Հայաստանի մէջ:

Իրական կողմին զուգահեռ, Սեբի Դաշնագիրի կենսագործման հիմնական գործօնը հայ մարդն է. առանց հայ անհատի հողին կառչածութեան, հողին վրայ բազմացման, հայ ընտանիքի բազմաճանապարհ, անհմատ եւ խօսիլ դաշնագիրներու հիման վրայ Հայաստանի հողերու ընդարձակման մասին: Դաշնագիրներով հող պահանջել եւ Հայաստանի սահմանները ընդարձակել՝ անպայման այո՛, բայց... ովքեր՞ պիտի հանդիսանան ասորող տարրերը այդ տարածքներուն վրայ, Հայաստանէն թէ Սփիւռքէն արտագաղթող, ուժացող հալե՛րը... թէ՛ ֆոյթպոլի մրցումի հրապարակած Ապտուլլա Կիլի ժառանգորդները:

ԱՀԱՐՈՆ ՇԵՐՏՆՄԵԱՆ

Սուրիոյ նախագահ՝ Պաշար Ասատ, երկօրեայ այցելութիւն մը պիտի տայ Ռուսիա եւ Սոչիի մէջ հանդիպում մը պիտի ունենայ նախագահ՝ Տիմիթրի Մետվետեի հետ:

Իտալական "AKI" լրատուական գործակալութեան համաձայն, նախագահ Պաշար Ասատի դէպի Բրիտանիա այցելութիւն մը կը նախատեսուի միջեւ տարբերակ: "AKI"-ի համաձայն, բրիտանական կառավարութիւնը որոշ վերապահութիւններ ունենալով հանդերձ, Սուրիոյ նախագահին հետ պիտի քննարկէ Իրաքի, Իրանի եւ Միջին Արեւելքի խաղաղութեան թղթածրարները:

Պաղատիկեան իշխանութիւններու նախագահ՝ Մահմուտ Ապպաս մի քանի ժամ տեւողութեամբ կարճ այցելութիւն մը տուաւ Եւտատա: Այդ միջոցին, ան հանդիպումներ ունեցաւ Ապտուլլա Պըն Ապտէլ Ազիզ թագաւորին, գահաժառանգ իշխան՝ Սուլթան Պըն Ապտէլ Ազիզի եւ արտաքին գործոց նախարար՝ իշխան Մեուտ Ֆայսալի հետ:

Ապպասի խօսակցութիւններուն առանցքը կազմեցին երկու կողմերուն միջեւ փոխ յարաբերութիւնները, ներպաղատիկեան հակամարտութիւնները, ինչպէս նաեւ շրջանային այլ հարցեր:

Իսրայէլեան բանակը Արեւմտեան Ափին մէջ ճեղքակալեց ութ պաղատիկեցիներ: Իսրայէլեան աղբիւր մը, հետագային յայտնեց, թէ ճեղքակալեալները ժամանակէ մը ի վեր կը գտնուէին Իսրայէլի ապահովական ուժերուն հետապնդումներուն տակ:

Իսրայէլեան աղբիւրներու համաձայն, պաշտպանութեան նախարար՝ Իհուտ Պարաք, յառաջիկայ շաբթուան ընթացքին պիտի այցելէ Գահիթէ եւ հանդիպումներ ունենայ նախագահ՝ Յիւսէֆ Մուպարաքի եւ այլ բարձրաստիճան պատասխանատուներու հետ: Պարաք պիտի քննարկէ Կազայի մէջ հաստատուած զինադադարին իրավիճակը, ինչպէս նաեւ՝ պաղատիկեան ճիւղատ Շալիթը ազատ արձակելու թղթածրարը:

Իրաքի ապահովական ուժեր յարձակում մը գործեցին Տիւրք նահանգին կառավարիչին վրայ եւ սպաննեցին անոր քարտուղարներէն մէկը:

Պաղատի մէջ, երկու անջատ պայթումներու զոհ գացին չորս անձեր: Յիւսիսային Նիւուէի մէջ պայթումի մը հետեւանքով սպաննուեցան վեց քաղաքացիներ:

Իրաք եւ Ռուսիա երկ կնքեցին Ելեկրուժի եւ ուժանիւթի համագործակցութեան համաձայնագիր մը: Ըստ կընքուած համաձայնագիրին, Ռուսիա պիտի ստանձնէ Իրաքի տարբեր շրջաններուն մէջ էլեկտրականութեան բաշխման ցանցերուն կառուցումը:

Իսրայէլի մէջ կայացող Թուրքիա-Ափրիկէ համագործակցութեան նուիրած երկօրեայ խորհրդաժողովին մասնակիցներուն ի պատիւ տուած ճաշկերպին ընթացքին, նախագահ Ապտուլլա Կիլ, իր արտասանած խօսքին մէջ նշած է, թէ մօտիկ ապագային, Թուրքիա պիտի սկսի բանակցութիւններ վարել Յայաստանի հետ:

Մերսին քաղաքին մէջ, ոստիկանութիւնը ձախողեցաւ չեզոքացնել ականահարուած ինքնաշարժ մը, որուն պայթուումի հետեւանքով սպաննուեցան երկու քաղաքացիներ, իսկ տասը թուրք ոստիկաններ փոխադրուեցան հիւանդանոց: Ցարդ, ոչ ոք ստանձնած է այս գործողութեան պատասխանատուութիւնը:

Թուրքիոյ էլեկտրուժի եւ բնական հարսութիւններու նախարար՝ Յիլմի Կիլեր յայտարարեց, թէ Պաղու-Ճէյհան-Թիֆլիս նաֆթամուղիի աշխատանքներուն վերսկսումը մի քանի օրերու հարց է:

Նախագահ Ապտուլլա Կիլ յատուկ հրամանագիրով մը ներում շնորհեց նախկին վարչապետ՝ Սեմէտտին Երպաքանին, որ անկի քան տասը տարիէ ի վեր կը գտնուի տնային կալանքի տակ: 81-ամեայ Երպաքան կամ ինչպէս ծանօթ է Թուրքիոյ քաղաքականութեան մէջ «խոճա» անունով, կը գտնուի առողջական ծանր վիճակի մէջ:

Ըստ Ատրպէյճանի տնտեսական նախարարութեան անցնող Յունուարէն Յուլիսի միջեւ, 213 նաֆթատար նւեր, 22 միլիոն թոն ազերիական նաֆթ փոխադրած են աշխարհի տարբեր անկիւնները: Այս միջոցին, Ատրպէյճանի նաֆթային արտադրութիւնը արձանագրած է 21 առ հարիւրի աճ մը: Ատրպէյճան ներկայիս կ'արտադրէ օրական 841 հազար տակառ հում նաֆթ:

Ազերիական աղբիւրներու համաձայն, Ռուսիա երկ ժամանակաւորապէս փակեց Լեհաստանի եւ Ատրպէյճանի հետ իր սահմանները: Իսկ այսօրու ընտեսելով, օտար քաղաքացիներ Ատրպէյճանի եւ Վրաստանի ճամբով պիտի չարտօնուին մուտք գործելու ռուսական հողեր:

Ռուսիոյ եւ արեւմուտքին միջեւ

գարգացող լարուածութեան ծիրին մէջ, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան խօսնակ՝ Անտոն Եւսեբերեւցօ յայտնեց, թէ Իրանի հրթիռներուն նկատմամբ Ռուսիայի կողմից ցուցաբերած մտահոգութիւնները անտեղի են:

Արաբիա երկէ չեղեալ նկատեց Օգոստոս 11-էն ի վեր յայտարարած ստիպողական վիճակը:

Ռուսիոյ խորհրդարանը իր Օգոստոս 25-ին գումարելիք նիստին ընթացքին պիտի քննարկէ Յարաւայի Օսթթիոյ անկախութիւնը ճանչնալու օրակարգը:

Չեչեն զինեալներ երեւ Չեչենիոյ մէջ զինեալ բախումի մը ընթացքին սպաննեցին երկու ռուս զինուորներ:

Ֆիլիպինացի արտաքին գործոց նախարար՝ Ալեքսանտր Սթոլի յայտարարեց, թէ Վրաստան՝ կանաչ լոյս տուած է Եւրոպայի համագործակցութեան եւ Անվտանգութեան Կազմակերպութեան քսան դիտորդներու Վրաստան մուտքին: Սթոլի նշեց, թէ Մուկուա՝ կանխաւ ընդառաջած էր անոնց Վրաստան մուտքին, սակայն կը սպասուէր Վրաստանի հաւանութեան:

Իտալիոյ արտաքին գործոց նախարար Ֆրանցօ Ֆրաթինի, Պրիւքսելի մէջ կայացած ՆԱՏՕ-ի անդամ պետութիւններու արտաքին գործոց նախարարներու նիստէն ետք յայտարարեց, թէ ռուսական Ատլանտեան Ուխտը կը գործէ տակաւին եւ չէ ընչուած: Ան անցնուց, որ ՆԱՏՕ-ի անդամ պետութիւնները հաւանութիւն տուած են պահել ռուսական Ատլանտեան Ուխտին գործունէութիւնը իրեն կարեւոր գործօն մը եւ երկխօսութիւնը շարունակելու միջոց:

Ֆրաթինի նշեց, թէ Ռուսիա ներկայիս պարտաւոր է գործադրելու զինադադարի համաձայնութեան մէջ նշուած վեց կետերը:

Վրաստանի նախկին նախագահ՝ Էտուարտ Շեվարտնաձէ միջազգային ընտանիքէն պահանջեց պատիժի ենթարկել Ռուսիան: Ան դիտել տուաւ, որ Ռուսիա սպառնալիք մը պիտի դառնայ Եւրոպայի համար:

"Le Parisien" օրաթերթէն լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ, նախկին Խորհրդային Միութեան արտաքին գործոց նախարարը կ'ըսէ, թէ Վրաստանի հակամարտութիւնը նախափորձ մըն է. «Եթէ Եւրոպացիները արտօսեն Ռուսիոյ փախուստ տալու Վրաստանի մէջ իր կատարածէն, ի՞նչ երաշխիքներ պիտի տան Լեհաստանին կամ Պրիւքսել երկիրներուն միւլետոյնը կրկնուելու պարագային», կը հարցնէ Շեվարտնաձէ:

ՆԱՏՕ-ի մօտ, Ռուսիոյ ներկայացուցիչ՝ Տիմիթրի Ռուկոզին, «Ֆրանս Ինթեր» ձայնասփիւռի կայանէն սփռուած հարցազրոյցի մը մէջ յայտնեց, թէ ռուսական զօրքերը սկսած են հեռանալ Վրաստանէն:

Արեւմտեան Թիֆլիսի մէջ ռուսական եւ վրացական բանակին միջեւ երկու տեղի ունեցաւ գերիներու առաջին փոխանակումը: Գերիներու փոխանակումը կատարուեցաւ Միջազգային Կարմիր Խաչի հովանաւորութեան տակ: Փոխանակումը ընդգրկեց 15 վրացի զինուորներու փոխարէն՝ հինգ ռուսեր:

Արեւմտեան Աֆղանիստանի Խոսթ նահանգին մէջ, դաշնակից ուժեր մեծ դժուարութեամբ յաջողեցան կասեցնել իրենց ազգական խարիսխին դէմ ուղղուած յարձակում մը: Բախումներուն ընթացքին սպաննուեցան 13 զինեալներ: Դաշնակից ուժերու հրամանատարութիւնը հաղորդեց, թէ իր շարքերուն մէջ չունէր կորուստներ:

Արեւելեան Աֆղանիստանի մէջ Թալիպանի դէմ զինեալ բախումի մը ընթացքին սպաննուեցան 10-ը ֆրանսացի զինուորներ եւ 29 ուրիշներ վիրաւորուեցան: Միւս կողմէ, բրիտանական «Տը Սան» օրաթերթը իր երեկուան թիւին մէջ գրած է, թէ բրիտանական յատուկ՝ S.I.S.-ի ուժեր պիտի մասնակցին Թալիպանի դէմ ճակատամարտին:

Աֆղանիստանի մէջ տասը ֆրանսացի զինուորներու սպանութեան առիթով, Ֆրանսայի նախագահ՝ Նիքոլա Սարքոզի երկ անակնկալ այցելութիւն մը տուաւ Զապուր: «Ֆրանսա ծանր հար-

ած մը կրեց ահաբեկչութեան դէմ իր պայքարին», յայտարարեց Սարքոզի:

Ֆրանսայի ընդդիմադիր՝ Ընկերակառական կուսակցութիւնը խորհրդարանական արտակարգ նիստ մը պահանջեց քննարկելու Աֆղանիստանի մէջ ֆրանսական զօրքերուն դերակատարութիւնը:

Փաքիստանի «Ժողովուրդի Կուսակցութեան» նախագահ՝ Անթ Չարտարի ըսաւ, թէ Փերեզ Մուշարաֆի հրաժարականը ժողովրդավարական չափանիշներուն ցցուն մէկ յաղթանակն էր:

Նշեց, թէ «Ժողովուրդի Կուսակցութիւնը» այսօր պիտի գումարէ արտակարգ նիստ մը որոշելու յետ-մուշարաֆեան հանգրուանի իր մարտավարութիւնը:

Մուշարաֆի հրաժարականին լոյսին տակ փաքիստանեան դրամանիշը՝ ռուփին տուարին դէմ անմիջապէս արժանագրեց հինգ առ հարիւրի բարելաւում մը:

Մայրաքաղաք՝ Իսլամապատի մօտ Մեուտական Արաբիոյ դեսպանը հերքեց Մուշարաֆը Ռիատ փոխադրելու մասին շրջող տեղեկութիւնները:

Չինաստանի մաքսատուը ձերբակալեց անէլի քան 300 Սուրբ Գիրք երկիրը մտնելու փորձող չորս ամերիկացի քարոզիչներ:

Չինաստան երկ պաշտօնապէս յայտարարեց, որ նախագահ Մուշարաֆի հրաժարականին լոյսին տակ կ'ակնկալուի, որ Փաքիստանի քաղաքական եւ տնտեսական կեանքը բոլոր կայունութեան շրջան մը:

Չամպիոյ նախագահ՝ Լիվի Մուսաուսա մահացաւ: Ան, անցեալ Յուլիսի սրտի տագնապի մը հետեւանքով փոխադրուած էր Ֆրանսա: Ըստ Չամպիոյ սահմանադրութեան, փոխ նախագահի՝ Ռուպէ Փանտա պիտի կառավարէ երկիրը, մինչեւ նոր նախագահի մը ընտրութիւնը:

Եգիպտոսի խորհրդարանին մէջ ծագեցաւ հրդեհ մը: Հրդեհը հետեւանք է ելեկտրականութեան խանգարումի մը: Հրդեհը պատճառեց նիւթական ծանր վնասներ: Ոստիկանութիւնը եւ ապահովութեան ուժեր փակեցին դէպի խորհրդարան առաջնորդող ճամբաները: Հրդեհը մարելու միջոցին հինգ ինչեւէր փոխադրուեցան հիւանդանոց:

Արեւելեան Աֆրիկոյ մէջ, ապահովութեան ուժերու վարժութեան կերտուի մը մօտ, անձնասպանական գործողութեան մը հետեւանքով սպաննուեցան 43 քաղաքացիներ: Ուրիշ 43 անձեր վիրաւորուեցան:

ՄԱԿ-ի մօտիկ աղբիւրներ հաւաստեցին, թէ Սոմալիի կառավարութիւնը ընդդիմադիր հոսանքներու կարգ մը ներկայացուցիչներուն հետ երկ կնքած է խաղաղութեան համաձայնագիր մը: Կյուսիւնները, կարգ մը արմատական հոսանքներ մերժած են ճանչնալ համաձայնագիրը:

Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար՝ Տեյլիտ Միլիպենտ պահանջեց, որ ՆԱՏՕ-ի հրամանատարութիւնը յանձնառութիւն ստանձնէ Վրաստանի եւ Աֆղանի անդամակցութիւնը ապահովելու ուղղութեամբ: Միլիպենտ նաեւ նշեց, թէ չի բաժնէր ճարտարարուեստով հարուստ ութ մեծ պետութիւններուն կազմէն Ռուսիան հեռացնելու առաջարկը:

Պելառուսիոյ նախագահ՝ Ալեքսանտր Լուքաշենցօ իր զօրակցութիւնը յայտնեց Ռուսիոյ, անոր՝ Վրաստանի դէմ պատերազմին: Լուքաշենցօ, երկ Սոչիի մէջ հանդիպում մը ունեցաւ Ռուսիոյ նախագահ՝ Տիմիթրի Մետվետեի հետ:

Նաֆթի գինը վերջին չորս ամիսներուն արձանագրեց իր ամենացած արժեքը: Տակաւ մը հում նաֆթի գինը երկ հասաւ 112 տուարի սահմանները:

Վենեզուելա յայտարարեց, թէ յառաջիկայ Սեպտեմբերին կայանալիք ՕԹԵԷ-ի գերատնտեսական պիտի պահանջէ նուազեցնել ՕԹԵԷ-ի անդամ պետութիւններուն քարիւղի օրական արտադրութիւնը:

Եւրոպական եւրօսն երկ ամերիկեան տուարին դէմ արձանագրեց վերջին վե